

թեամբ իւրաքանչիւր վանական կը կապուէր իւր վանքի հետ եւ նախանձախնդրութեամբ կը հետեւէր իւր վանքի պայծառութեանը; Այսպիսով ազգը կազմառուէր ականատես, նշաւակ եւ ենթակայ լինելու թափառական վանականների անվայել գործողութեանց, վանականների որոնք անսահման ազատութեամբ եւ եւ մուտ գործելով ամեն տեղ՝ ի գայթակղութիւն ժողովրդեան հանդիսադիր են լինում զանազան անտեղութեանց:

Կը ցանկայինք որ Կ. Պօլսոյ լրագրութիւնը փոխանակ զրագարածի գերը ստանձնելու խաղալիք դառնալով անամօթ զրագարադիչներին, աւելի եւս լուրջ դրութիւն ստանար, գործի վերայ նայէր մարդավայել հայեացքով:

Կը ցանկայինք որ Կ. Պօլսոյ Ռուսահայոց մամուլի թղթակիցները փոխանակ զանազան հանդէսների նկարագրութեամբ զբաղեցնելու ընթերցողներին, նկատ աային տեղոյն գործերը գիտենալու եւ հետեւելու—մանաւանդ այն գործովաւթեանց՝ որոնք ընդհանուր մասնակցութիւն են պահանջում, —որպիսի են Միացեալ ընկերութեանց, Երուսաղէմայ եւայն գործերը:

Կը ցանկայինք որ Պօլսոյ Պատրիարքարանը վերահսկողի պաշտօնը ստանձնած լինելով՝ հետեւէր բոլոր գործովութեանց, կանոն եւ ուղեցոյց ունենալով ճշմարտութիւնը, արդարութիւնը եւ եկեղեցական ազգային աւանդութիւններն ու սովորութիւնները:

ՅՈՒՍԻԿ Վ. ԱՐԴԻԱՊԵՏ

Կ. ՊՕԼՍՈՅ ՀԱՅՑ

Ա. Երեկ, (11-ն Մայիսի) Ա. արշութեան Քաղաքական և Խառն ժողովները գումարեցան ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ Ա. Պատրիարք Հօր:

Խառն ժողովը, նկատելով որ Գահիրէի Ազգային Ա. արշութեան մէջ տիրած շփոթութեանց և դատական գրաւմանց պատճառաւ ելեւմտից խանգարում յառաջ եկած է, և դատական նոր արգելքներ ազգային հասութից վերջին ազրիւները ցամքեցուցած են, եկեղեցին քահայման եւ վարժարանը փակման վիճակի ենթարկուած են — Ա. սեմ. Ստեփան փաշան, որ ի Գահիրէ է պատուիրակ կարգեց և անոր պաշտօն յանձնեց փոխանորդարար բարեկարգել Եպիպատոսի Ազգային Ա. արշութեանը, պարտուց և զրաւման խնդիրները կարգադրել, ըստ ազգային օրինաց՝ վարչական մարմին մը հաստատել, թէ Գահիրէի և թէ Ալեք-

սանդրիոյ եկեղեցեաց մատակարարութիւնն և ազգային ներքին գործոց տնտեսութիւնն ազգային օրինաց շրջանին մէջ սահմանափակել, և առաջնորդական ընտրութիւն կատարել տալ Սոյն պաշտօն հեռագրաւ ծանուցուեցաւ անմիջապէս Ասեմ. Ստեփան փաշային, որ անձնութիւրար ստանձնեց զայն, առանց փոխարինութեան, և Ազգային Անդրուական Վարչութիւնն որոշեց ամեն գիւրութիւն բնծայիկ Ասեմ. պատուիրակին իւր կարեռը պաշտօնին յաջողման համար Միտնգամայն Խրտիվական կառավարութեան պիտի գրուի խնդրելու համար որ իւր կողմէ ճանչէ և չնար եղածին չափ գիւրացնէ Ասեմ. Ստեփան փաշայի պաշտօնը:

Բ. (Մայիսի 18) Քաղաքական ժողովը գումարեցաւ ընդ նախադաշտութեամբ Ամեն. Ա. Պատրիարք Հօր, և ատենապետութեամբ Ասեմ. Սիմոն պէջի, հետեւեալ տնօրինութիւններն ըրաւ.

1. Քաղաքապետութիւնը կը պահանջէր որ Միմարները ժողովրդէն ընտրուելով Քաղաքապետութեան ներկայացուին ի վաւերացումն: Քաղաքական ժողովը նկատելով որ Քաղաքապետութեան այս պահանջումն հնաւանդ սովորութեան գէմ է, որուն համեմատ Միմարները մինչեւ ցարդ Թաղ. խորհրդոց կողմէ կընտրուին և անոր պատասխանատու են, — որոշեց հին սովորութիւնն անփոփոխ պահելու համար հարկ եղած միջոցներն ի գործ դնել:

2. Տիվրիկի թէ Թուրք և թէ Հայ հասարակութիւնք գանգատած լինելով թէ տեղական Կառավարութիւնը զցյդ մը եղի համար 21 օհսացորեն կը պահանջէ ի նպաստ տեղւոյն կրթական հաստատութեանց, Քաղաքական ժողովը նկատողութեան առաւ զայս խնդիր, և որոշեց քննութիւն մը կատարել տեղւոյն վրայ և ստուգել թէ հաւաքուած զըրամն ինչ կերպի պիտի գործածուի, ինչպէս պիտի բաշխուի և իւրաքանչիւր աղքի բաժինը պիտի յանձնուի իւր Ազգ. վարչութեան: Այս կէտերու նկատմամբ տեղեկութիւն ստանալէ յետոյ, ժողովը տեղով տնօրինութիւն մը պիտի ընէ:

3. Կեդրոնական սնտուկի անձուկ վիճակին, ելմտացոյցի հաւասարակշռման եւ անվճար տրոց հաւաքման նկատմամբ ժողովը խորհրդակցեցաւ Տնտեսական խորհրդոյ ատենապետ Սեթեան Միհրան էֆէնտիի հետ, և ընդարձակագոյն տեղեկութիւններ ստանալու և ըստ այնում տնօրէնութիւն մ'ընելու համար, — որոշեց յառաջիկայ նստին ի խորհրդակցութիւն հրաւիրել Տնտեսական խորհրդոյ բոլոր անդամները:

4. Քաղ. ժողովը Բ. Դրան գիմելու կարօտ քանի մը յարաբերական խնդիրներով ալ զբաղեցաւ:

5. Պոյածի գիւղի Թաղ. խորհրդին սահմանադրական ընտրութեան գէմ գանգատներ եղած և թաղեցւոց միջեւ գժտութիւն ծագած լինելով, Քաղ. ժողովը նոյն թաղին համար առժամանակեայ Թաղ. խոր-

հուրդ մը կարգեց, որոյ անդամ նշանակեցան նոյն անձինք, որք արդէն Թաղ. խորհրդոյ անդամ ընտրուած էին:

Գ. Կրօնական ժողովն (Մայիսի 18) գումարեցաւ և հետևեալ տնօրէնութիւններն ըրաւ.

1. Հայ Եկեղեցականաց Միաբանութեան Կանոնագիրը Կրօնական ժողովը վաւերացման ներկայացուած լինելով, Ա. Պատրիարք Հայրն ինչ ինչ դիտողութիւններ ըրաւ, եւ որոշուեցաւ յիշեալ Կանոնագիրը Ա. Պատրիարք Հօր գիտողութեամբք հանդերձ ետ յղել առ ատենապետըն Համագումար ժողովոյ:

2. Ի դաս Հայ Եկեղեցականաց ընդունուելու համար՝ Հ. Առքիաս Պարոնեան Հոռժէական վարդապետի խնդիրն ընդունուեցաւ.

3. Համագումար ժողովոյ պատրաստած ծրագիրն, որ Կրօնական ժողովոյ իրաւասութեան սահմանը կը գծէր, Ա. Պատրիարք Հօր գիտողութեամբք հանդերձ Համագումար ժողովին վերադարձնել որոշուեցաւ.

Կալողիկոսական լիազօր Յանձնաժողովը կողմէ կարգեալ մասնախումբն իւր նախընթաց աւուր նստին մէջ, որ Ղալաթիոյ խորհրդարանը գումարեցաւ, բաւական յառաջ տարաւ իրեն յանձնուած աշխատութիւնը.

Տնտես. խորհուրդն ալ նիստ ըրաւ Մայիսի 18 և Կեդրոնական սնտուկի հաշիւնները սահմանադրական տարեգլխի առթիւ փակելով, հաշուետումարաց մանրամասնութիւնը քննելու համար մասնախումբ մը կարգեց որոյ անդամ են. —

Յակոբ Էֆ. Սվաճեան, Յակոբ Էֆ. Արշակ, Միհրան Էֆ. Զօպանեան. Նշան Էֆ. Պօյաճեան, Ղաղար Էֆ. Հովուեան.

Նոյնպէս Տնտես. խորհուրդը Քաղաքական ժողովոյ կողմանէ իրեն յանձնուած Սամաթիոյ Ա. Գէորգ Եկեղեցւոյ շինութեան խնդիրը ուսումնասիրեց, սակայն վերջնական տնօրէնութիւնը՝ յառաջիկայ նստին թողուց:

Բարերդի նախկին առաջնորդ Ռուրինեան Գև. Ամբրոսիոս վարդապետ Մայիսի 18 ին մայրաքաղաքու հասաւ.

Յաւելով կը ծանուցանենք թէ Ասեմ. Տօքթ. Սերվիչեն Էֆէնտի, Ասեմ Սահմակ Ապրօ Էֆէնտի, և Մեծ. Կիւմիւշկէրտան Տիգրան Էֆէնտի Ունձեան, Արիկ Էֆէնտի և Շամտանձեան Գրիգոր Էֆէնտի հրաժարագիր զրկած են յերեսփոխանութենէ.

Պալատու թաղէն Աղդ. Երեսփոխան ընտրուեցաւ Խասպիւղի նախկին Երեսփոխան Թաղէոսեան Ռէթէոս Էֆէնտի. (Մասիս),